

բանի մը գիմաց յուզուեցան, և ոմանք, աւանդութեան նայելով, աղջիկները իրենց ծնողաց դարձոցին ծրի, ուրիշներ ալ փոխարէն պօտի փրանք մը առնելով: Բայց գաշանաւում առ մարզ վճարելով թիզ մը յափաւումը բաւական պատճառ համարելով Աֆղանստանուն տիրեցին ջուղայի բոլոր ապրանքներուն, և զիմաւոր քաղաքացիներուն տանջանքի կոկիծները զգացուցին:

Տ. Մարտիրոս. Պատմ. Պարիս, հունվար 158-161

ՀՆԴԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԱՐՄԻԿՆԵՐԸ

Երբեմն ես և իմ եղայրս զուարթ և գոռոզութեամբ լեցուած՝ զօրաւոր թորիչը մ'առինց գերազոյն ճանապարհները ճանշնալ ուզելով: Երբեմն Վինստիայի զագաթին վրայ ճգնաւորներու առջև երկուցնիս ալ մահուան իշխանութեանը տակ ինկած՝ անզերու թագաւորութիւնը զրատ զրինց մեզի: Այսօր մենց արեգական ետևն պիտի երթանց արևելքն մինչև արևմուտքը. այս ըսելով հոգմերու ճանապարհը կը ըշունենք և հեռուէն երկիրը կը զիտենք. բաղացները որ խոռուն կը բարձրանային կառցի անիւններու մեծութիւնն ունէին. հոս կը հնչէր զործիցներու միաձայնութիւն մը, հոն ազօթական մրմունջներ. ամէն կողմ կը փայլվէին շողշողուն մատանիներով զարդարուած յաւերժահարսունք:

Ենուոյ ուզելով մեր բոլոր ուժերը պարզել և երկուցնիս ալ յաղթանակի ծարակի՝ միջոցին մէջ աւելի վեր կը բարձրանանք, կը նեսուրինց արեգական ճանապարհն մէջ և գէպ ի վեր սաւառնած պահուն կ'ուզելու գէպ ի վար երագ նայուածքներ: Այն ժամանակ երկիրը՝ զեռ կը յիշեմ՝ իւր գալար կանաչութեամբը գրուագեալ՝ կը պարզէր գէպ ի հեռուն իւր գարւանիները ինչպէս դաշտ մը լոտոսի ծաղիներով ծածկուած: Գետերը արօտի մ'ակօններու կը նմանէին, և Հիմավաթ Վինտիա, Մերու Ավկանոսի ալիքներէն

digitised by

շրջապատուած կը բարձրանային գետնի վրայէն՝ ինչպէս ժայռերու վրայ կանգնած փիղեր: Շուտով յոփութիւնը, ջերմութիւնը, ջերմը կը տիրեն մեզի և վայրը կը բարախտէ մեր սրտերուն մէջ: Յիւրագի այլևս չէինց տեսնար ոչ Քիվերայի արևելքը և հիւսիսը, ոչ ալ Եամայի արևմուտքը և հարաւը, ոչ ալ անոնց մէջ գտնուած ափունցները, ամենայն ինչ կը թուէր վառարան մը արեգակով լցուած. կարծես թէ կրակը տիեզերքը կը հաւեցնէր, ինչպէս աշխարհներու աւերման օրը: Ալքեգակը բոլորովին կարմրած՝ կրակի զանգուած մ'էր երկնքի կեղրոնք. հազիւ թէ իւր անհուն մարմինը կը զատուէր հրդեէն: Եթե տաժանելի ճիգերու կրցայ միայն զինքը դիտել և նա երկրիս չափ մէծ երկցաւ ինձի:

Բայց ահա, յանկարծ, իմ եղբայրս պայքարէն հրաժարելով ինքինը թոյլ կու տայ ու կ'ինայ երեսը զէպ ի զետին. զայս տեսնալով կը փութամ ինքինքս կը զահավիժեմ երկինքն զէպ ի վար: Թեերովս պաշտպանուած չայրեցաւ. բայց հրայրեաց արեգակը զիս այրեց՝ երր օդին միջէն զահավէժ կ'իշնայի: Վինստիա զիս ընդունեցաւ վերջապէս. թեերս այրուած էին, հոգիս ապշտութեան մէջ. իմին եղբայրս կ'ըսէն ընկաւ Եանաստանայի վրայ:

Թրգմ. Հ. Ա. Յովակինս

ԲԱՑՈՒԱՆ և ԲԱԺԱՐԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ամբողջ տարւայ (26 գիրք)
Բաժանորդագինն է
Բագու 5 բուրլի
Ուրիշ բաղացներ 6 բուրլի
Արտասահման 22 քր. կամ 8. բուրլի
Խորացանչեր զրբի գինն է 30 կոպէկ
Գիմել՝ Բագու Հ. Կ. Միութեան հրատարակչական սեկցիային
A.R.A.R. @